Արտաշես Քալանթարյան

ՏԵՐԵՎԱԹԱՓ

Նրանք քայլում էին փողոցով՝ նկարիչն ու անվանի գիտնականը: Քայլում էին լուռ ու դանդաղ, ինչպես կարող են միասին քայլել ու լռել մարդիկ, որոնք խոսքերի կարիք չունեն՝ իրար ինչ-որ բան ասելու, իրար հասկանալու համար:

Նրանք երկար էին քայլել աշխարհի վրա և շատ աշուններ էին տեսել, բայց ամենուրեք երազել էին Երևանի աշունը, որովհետև ոչ մի տեղ աշունն այնքան հարուստ, այնքան բարի, այնքան ջերմ չէ, որքան Երևանում:

Ու կրկին ու կրկին զարմանում էին ու զարմանալով հիանում բնության իմաստությամբ ու գեղեցկությամբ: Որտեղի՞ց է նա գտել այս ներկերը, այս գույները, այս երանգներն ու նրբերանգները, որ հիմա սիրող պատանու շռայլությամբ նետել է այս ու այն կողմ ու զարդարել աշխարհը՝ հրդեհել այն մենավոր ծառը, կարմիրով ներկել այս թփերը, նարնջին թափել ցանկապատին:

Տաք աշուն էր:

Հետո նրանք դիտում էին, թե ինչպես են անաղմուկ ու հանդարտ պոկվում տերևները՝ մի վերջին անգամ քնքշորեն շոյելով ճյուղերը ու գգվելով դեռ ամուր, դեռ դիմացող տերևներին: Ու երկար, սքանչացած նայում էին, թե ինչպես են նրանք խաղում, տարուբերվում օդում ու մեղմիկ շրշալով իջնում իրար ետևից, անդադար հոսանքով, իջնում ու կիտվում իրար վրա, մի փափուկ, նրբահյուս գորգի վերածվում, զարդարում քաղաքի մայթերը ու հաճելիորեն խշշում ոտքերի տակ:

- Հրաշալի աշուն է:

Դա ասաց գիտնականը: Ասաց ո՛չ նկարչին, ո՛չ անցորդներին: Ասաց իրեն, բայց ասաց բարձրաձայն:

Նկարչի աչքերը շողացին:

- Հրաշք է,- ասաց նա՝ կանգ առնելով,- չգիտեմ ով ոնց, բայց ես ամենից շատ աշունն եմ սիրում, տերևաթափը... Դե նայի՛ր,- ասաց նա,- մի՞թե սրանից ավել սքանչելիք կարող է լինել աշխարհում: Եվ գիտե՞ս միայն ինչն է պակասում,- նա մտերմորեն բռնեց գիտնականի արմունկը,- անձրևը, այո՛, այո՛, աշնան անձրևը, որ բարակ, աննշմար շղարշի պես իջնում է, հա իջնում, ու մեկ էլ տեսնում ես՝ փայլ է տվել ամեն ինչին և ավելի ընդգծել գույները: Այնպես չէ՞...

Գիտնականը լուռ էր:

- Այնպես չէ՞,- կրկնեց նկարիչը՝ մտածելով, թե գիտնականը չլսեց իր խոսքերը,- այն լուսավոր, բարակ անձրևը, որ միայն աշնանն է լինում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Չէ՛,- հանկարծ ասաց գիտնականը:

- Ի՞նչը:

- Չէ՛,- կրկնեց գիտնականը,- անձրևը լավ չէ: Իսկ դու գիտե՞ս, որ երբ անձրևը թրջում է թափված տերևները, դրանք շատ ամուր են կպչում ասֆալտին, անհնար է լինում պոկելը:

Նկարիչը ապշեց:

- Սպասի՛ր, բայց դա ի՞նչ նշանակություն ունի, թող չպոկվեն:

- Դռնապանները պարտավոր են մաքրել մայթերը,- կամացուկ պատասխանեց գիտնականը:

Նկարչին թվաց, թե իրեն ապտակեցին: «Չէ՞ր լսում, թե ծաղրում է ինձ,- մտածեց նա խռովելով,- ես խոսում եմ այս հրաշալի գույների մասին, իսկ նա ասում է՝ դռնապանները... Դռնապանները, դռնապանները... » - ակամա մտքում զայրացած կրկնեց նկարիչը ու հանկարծ...

Ու հանկարծ հիշեց, որ այս մեծ գիտնականը իր ողջ մանկությունն անցկացրել է դռնապան ծնողների հետ, մեծ քաղաքի ասֆալտե մայթերին:

Նա կամացուկ տնքաց, ավելի ամուր սեղմեց ընկերոջ արմունկը, ու նրանք կրկին քայլեցին փողոցով, որը աշնանային հրաշալի գույներ ուներ հագին և ուր տերևները հաճելիորեն խշշում էին մարդկանց ոտքերի տակ:

Բայց չգիտես ինչու, նկարչին աշունն այլևս առաջվա պես հրաշալի չէր թվում...

Աշուն էր:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org